

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հանրային ներդրումների քաղաքականության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում, որն իր իրավասությունների շրջանակներում ապահովում է Նախարարությանը օրենքով և այլ իրավական ակտերով վերապահված խնդիրների և գործառույթների իրականացումը:

2. Վարչությունը իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, Հայաստանի Հանրապետության վարչապետի և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, Նախարարության և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի (այսուհետ՝ Նախարար) և Նախարարության գլխավոր քարտուղարի հրամաններով:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում նախարարը՝ նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Հանրային ներդրումների քաղաքականության վարչության հիմնական խնդիրներն են՝

- 1) հանրային ներդրումների արդյունավետության բարձրացումը,
- 2) պետություն-մասնավոր գործընկերության զարգացումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Վարչությունը իր առջև դրված խնդիրների և նպատակների իրականացման համար իր իրավասությունների սահմաններում իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) մշակում է հանրային ներդրումների կառավարման օրենդությունը և իր իրավասությունների շրջանակներում ապահովում դրա կիրառումը,

2) մշակում է հանրային ներդրումների առաջնահերթությունների որոշման մեթոդաբանությունը,

3) մշակում է հանրային ներդրումային ծրագրերի պատրաստմանն ու իրագործմանը ներկայացվող նվազագույն պահանջները,

4) աջակցում է կոնկրետ հանրային ներդրումային ծրագրերի իրագործման համար պատասխանատու անձանց՝ մշակելով և վերջիններիս տրամադրելով հանրային ներդրումների կառավարման վերաբերյալ մեթոդաբանական ձեռնարկներ և ուղեցույցներ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության տրամադրելով դրանց վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ,

5) համակարգում է հանրային ներդրումային ծրագրերի առաջնահերթությունների որոշման գործընթացը, իրականացնում դրանց ընթացքի դիտանցում և արդյունքների գնահատում,

6) իրականացնում է հանրային ներդրումային ծրագրերի գնահատումը,

7) մշակում է «պետություն-մասնավոր հատված» համագործակցության քաղաքականությունը,

8) մշակում է պետություն-մասնավոր գործընկերության ընթացակարգերը,

9) իրականացնում է պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի մեթոդաբանական ուղեկցումը,

10) իրականացնում է «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ գործառույթներ:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

7. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են վարչության պետը, վարչության պետի տեղակալը և վարչության աշխատողները:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Վարչությունը՝

1) իր իրավասությունների շրջանակներում կազմակերպում և իրականացնում է աշխատանքներ՝ համագործակցելով նախարարության այլ ստորաբաժանումների, Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ.

2) Նախարարության այլ ստորաբաժանումների հետ համատեղ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների համագործակցությամբ, նախապատրաստում է վարչության գործունեության ոլորտներին վերաբերող օրենքների և իրավական այլ ակտերի նախագծեր.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրին համապատասխան, ներկայացնում է հաստատման վարչության ծրագրերը, ինչպես նաև ապահովում է դրանց կատարումը.

9. Վարչության աշխատանքների ղեկավարումը իրականացվում է վարչության պետի կողմից:

10. Վարչության պետը՝

1) իրականացնում է Վարչության աշխատանքների կազմակերպումը և ընդհանուր ղեկավարումը,

2) կատարում է նախարարի, նախարարության գլխավոր քարտուղարի կողմից իրենց լիազորությունների սահմաններում տրված հանձնարարականները:

3) պատասխանատու է վարչությունում համապատասխան աշխատանքային մթնոլորտի և կարգապահության ապահովման, վարչությունում

աշխատակիցների միջև աշխատանքների բաշխման և դրանց կատարման համար.

4) բացահայտում, վերլուծում և գնահատում է Վարչության առջև դրած գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ կամ ապահովում է այդ աշխատանքների կատարումը.

5) անմիջական հաշվետու է նախարարին:

11. Վարչության կողմից պատրաստված ներքին գրությունները ստորագրվում են Վարչության պետի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ փոխարինող անձի կողմից:

12. Վարչության աշխատակիցները կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովների աշխատանքային խմբերում:
